Հաստատված է
համայնքի ավագանու ...2013թ.
թիվ 06 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐՓԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016թթ.
ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ
17.01.2013թ.

2013թ.

1. Համայնքի իրավիճակի գնահատում

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Արփի գյուղը հիմնադրվել է 1965թ. Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի տարահանման բազայի վրա:
Գյուղը գտնվում է Արփա գետի հովտում, Եղեգնաձոր մարզկենտրոնից 8կմ արևմուտք: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1100մ է: Գյուղի միջով հոսում է Արփա գետը: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը շոգ: Տեղումների քանակը տարեկան 250-300 մմ է:
Չնայած ոչ բարենպաստ պայմաններին, մշակվող բույսերի տեսականին բավականին ընդարձակ է:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում է	1275 մարդ, որոնցից
տղամարդ	617
կին	658
երեխա / 0-6տ /	95
դպրոցականներ / 6-17տ./	186
18-62տ.	877
թոշակառու	119
հաշմանդամ	31
աշխատունակներ	807

Գյուղն ունի 328 ծուխ, որից 23-ը ընդգրկված է փարոսի համակարգում:

Տեղական Ինքնակառավարման մարմիններ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է 4 տարին մեկ անգամ:
Գյուղապետարանում և ենթակա կառույցներում / գրադարան, մշակույթի տուն, մանկապարտեզ/ աշխատում են 18 մարդ:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

1. Վարչական շենք
2. Մանկապարտեզ
3. Նախկին ճաշարանի շենք /տեղակայված են գրադարան, միջոցառումների սրահ տուն և 5 անօթևան ընտանիքներ/:
4. Ներհամայնքային ճանապարհներ
5. Խմելու ջրի ցանց
6. Կոյուղու ցանց

Նշված գույքի ֆիզիկական վիճակը վատ է, բացառությամբ խմելու ջրի ցանցի, որն ունի մասնակի վերանորոգման կարիք:
Վերանորոգման և ասֆալտապատման կարիք ունի ներհամայնքային ճանապարհների ցանցը: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 7կմ ճանապարհ և փողոցներ:

Շրջակա միջավայրի պահպանություն

2008թ. նոյեմբերից աղբահանությունը կազմակերպվում է պարբերաբար գյուղապետարանի միջոցներով:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 76 առանձնատուն, 126 բնակարան: Կարիքավոր ընտանիքների թիվը 25-ից ավելի է, որը տարեցտարի աճում է, 6 ընտանիք ապրում է ժամանակավոր կացարանում, կան բազմաթիվ վթարային շենքեր /բնակիչների սոցիալական վատ վիճակի պատճառով չեն վերանորոգվում/:

Հողատարածքների օգտագործում /հա/

համայնքի վարչական տարածք	1347.9
վարելահողեր	290.91
արոտավայրեր	405.7
անօգտագործելի հողեր	468.36
ծորեր	10
գերեզմանոց	1.7
տնամերձ հողեր	63.51
դպրոց	2.21
մանկապարտեզ	0.265
հուշարձան	0.04
սեփականաշնորհված հողեր	174.8
մեկ հողաբաժնի չափը	0.43
սեփականաշնորհումից օգտվել	257 ընտանիք
դաշտային ճանապարհներ	10
գյուղամիջյան փողոցներ	7.5

Գյուղատնտեսություն

Համայնքում հիմնականում զբաղվում են բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Տեխնիկայի պակասի պատճառով պակասել է ցորենի և գարու մշակությունը:
Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են հիմնականում միս, կաթնամթերք /պանիր/ բուրդ, մեղր: Բնական խոտհարքներ չունենալու պատճառով տարեցտարի պակասում է անասնապահությամբ զբաղվողների թիվը:

Կրթություն

Գյուղն ունի մեկ մանկապարտեզ և մեկ միջնակարգ դպրոց: Մանկապարտեզի շենքը հիմնանորոգման խիստ կարիք ունի, իսկ դպրոցը վերանորոգվել է և բարվոք վիճակում է:
Նախատեսված է 420 աշակերտ – տեղի համար, հաճախում են 158 երեխաներ:

Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքը իր գոյության օրվանից սպասում է մշակույթի տան կառուցմանը, որը եղել է և մնում է գյուղի հասարակության, առավել ևս երիտասարդության անհրաժեշտ երազանքը: Մշակույթի տան բացակայությունը ցավալիորեն վատ է անդրադառնում երիտասարդության հոգևոր դաստիարակության վրա: Համայնքն ունի հարուստ գրադարան, որի գրքային ֆոնդը պահպանվում է անմխիթար շենքային պայմաններում / նախկին ճաշարանի շենքի մի հատված, զուրկ որևէ նորմալ պայմաններից / :
Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից /գործում է միայն ֆուտբոլային թիմը/:

Առողջապահություն

Գյուղում գործում է մեկ բուժ. կետ, որը բարվոք վիճակում է, ունի երկու աշխատող:

Համայնքի ուժեղ կողմերը

Համայնքն ունի բուհի 68 շրջանավարտ, որոնք տիրապետում են տարբեր մասնագիտությունների և կարող են կազմակերպել կրթության, մշակութային, շինարարական և այլ աշխատանքներ: Գյուղից դեպի հարավ Արփա գետից 0.5կմ վերև կա քվարցիտի հանք, որի շահագործումը կնպաստի գյուղի սոցիալական վիճակի բարելավմանը: Գյուղի միջով է անցնում Երևան –Մեղրի մայրուղին:

Համայնքի թույլ կողմերը

Ներհամայնքային ճանապարհների, ոռոգման ներքին ցանցի վատ վիճակը, գործազրկություն, արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացումը, գյուղմթերքների վերամշակման և ընդունման կետերի բացակայությունը, մշակութային կյանքի պասիվությունը:

Համայնքի հնարավորությունները

Մեծ աշխատուժի առկայությունը

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ և բարեկեցիկ:
Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

1. Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում:
2. Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները:
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:
4. Ապահովվել համայնքի գիշերային լուսավորությունը ամբողջությամբ /2009-12թթ.-ին լուսավորությամբ ապահովվել է մի մասը/

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ծրագիր 1

Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1966-67թթ.-ին:

Ծրագրերի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի մանկապարտեզի շենքի տանիքը և առաջին հարկը հիմնանորոգման կարիք ունեն: Շենքի առաջին հարկի լուսամուտները դեֆորմացվել են և մեծ մասամբ բացակայում են ապակիները: Այս պահին շահագործվում է միայն շենքի մի հատվածը, որը հնարավորություն է տալիս մանկապարտեզ ընդունել հաճախել ցանկացող երեխաների երկու խումբ միայն /38 սան/: Ընդառաջելով բնակչության դիմումներին, սույն ծրագրով առաջարկվում է հիմնական նորոգման ենթարկել համայնքի մանկապարտեզի շենքը, որը հնարավորություն կտա մանկապարտեզ հաճախել ևս 1-2 խումբ երեխաների /մանկապարտեզը նախատեսված է 100 երեխա - տեղի համար/:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. Ապահովել համայնքի բոլոր նախադպրոցական հասակի երեխաների հաճախումը մանկապարտեզ
2. Բարձրացնել նախադպրոցական /առաջնահերթ 4-5.6 տարեկան/ երեխաների կրթական մակարդակը՝ այն հասցնելով դպրոցի համար նախատեսված մակարդակին

Ծրագրի իրագործման ժամանակ անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

1. Հիմնախնդիրները բարձրացնել ՀՀ Կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար:
2. Ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը
3. Կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
4. 2013թ.-ին իրականացնել նախատեսված շինարարական աշխատանքները

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը համայնքի երեխաների կրթական մակարդակը կդրվի բարձր հիմքերի վրա:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մտավոր հաշվարկներով մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների արժեքը կկազմի 80 մլն. ՀՀ դրամ:

Ծրագիր 2

Կոյուղու ցանցի հիմնանորոգում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կոյուղու ցանցը կառուցվել է 1965-1984թթ.-ին: Այն ունի 4.5 կմ երկարություն: Հետխորհրդային տարիներին, տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 40 տարվա վաղեմություն ունեցող կոյուղու գծերը: Հաշվի առնելով հանգամանքը, որ գյուղով է անցնում միջպետական նշանակության մայրուղին և, որ շոգ ամռանը մայրուղուն հարող տարածքներով անցնող, շարքից դուրս եկած, կոյուղու գծերով հոսող կեղտաջրերը ստեղծում են հակասանիտարական վիճակ, պարարտ հող ստեղծելով կրծողների համար, հրատապ խնդիր է դարձել հիմնանորոգել կոյուղու ցանցը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Կանխել կեղտաջրերի արտահոսքի պատճառով առաջացող վարակիչ հիվանդությունները, համայնքը դարձնել ավելի բարեկարգ: Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

1. Կնքել պայմանագիր Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90%-ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10%-ը համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից:
2. Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը 50%-ով կբարելավվի սանիտարական վիճակը, կկանխվի համաճարակային հիվանդությունների առաջացումը և տարածումը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով կոյուղու ցանցի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 70 մլն. ՀՀ դրամ:

Ծրագիր 3

Մշակույթի տան կառուցում

Համայնքը իր հիմնադրման պահից մինչև այսօր կանգնած է այս անլուծելի գորդյան հանգույցի առաջ: Բոլոր ժամանակներում՝ և խորհրդային տարիներին, և հետո եղել են խոստումներ, կառուցելու մշակույթի տուն, որը իր մեջ կներառի նաև գրադարանն իր ընթերցասրահով և սպորտ դահլիճ, վարչական շենք, քանի որ վերջինս, հարմարեցված է բնակելի տան մի մասում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքը ընդհանրապես չունի աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր, ինչպես նաև մշակութային և սպորտային կյանքը համայնքում զարգացնելու հնարավորություն, առաջնահերթ խնդիրներից է մշակույթի տան կառուցումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են՝

1. Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
2. Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկոներ
3. Բարձրացնել սպորտային խաղերի մակարդակը՝ տրամադրելով խաղասենյակներ շախմատի, շաշկու և այլ խաղերի համար
4. Վարչական մասի տրամադրումով ավագանուն ապահովել մշտական նստավայրով՝ նիստերի և բնակչության հետ անմիջական կապ հաստատելու համար:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

1. Դիմել կառավարությանը առաջիկա 1-2 տարում գումար հատկացնելու համար
2. Կազմակերպել համայնքի կողմից ներդրումների հարցը:

Ծրագրից սպասվող արդյունքները

1. Բնակչության ազատ ժամանակը հետաքրքիր, բովանդակալից և արդյունավետ դարձնել
2. Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար
3. Կասեցնել համայնքից բնակչության արտագաղթը

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով մշակույթի տան կառուցման արժեքը կկազմի մոտ 500մլն. ՀՀ դրամ:

Ծրագիր 4

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 7 կմ-ից ավելի, որից 1.5կմ համայնքի կենտրոնական ճանապարհն է, որը ասֆալտապատ է, բայց մասնակի վերանորոգման կարիք ունի: 2007թ.-ին խմելու ջրի ներհամայնքային ցանցըվերանորոգելիս, քանդվել են ներհամայնքային ճանապարհների որոշակի հատվածներ: Գյուղամիջյան ճանապարհներից ասֆալտապատ են 4-ը, որոնցից 2-ը վատ վիճակում են: Բնակչության դիմումներին ընդառաջելով, այս ծրագրով առաջարկվում է բարեկարգել համայնքի փողոցները և ասֆալտապատել նախկինում ասֆալտապատված փողոցների քանդված հատվածները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակն է

1. Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:
2. Վերացնել փողոցների ջրափոսերը, ապահովելով անվտանգ երթևեկություն:

Ծրագրի խնդիրները

1. Համագործակցել ՄԱԿ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի հետ՝ ֆինանսական միջոցներ ձեռք բերելու և ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմակերպելու համար:
2. Կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում՝ նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ:
3. Աշխատանքներ կազմակերպել 2014-2015թթ. ընթացքում:

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Վայոց Ձորի մարզի Արփիի համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի աշխատանքների իրականացումը կարժենա ՀՀ դրամ: /հազ. դրամ/

	Եկամուտի տեսակը	2009թ. փաստացի	2010թ. նախատեսվ.	2011թ. նախատեսվ.	2012թ. նախատեսվ.	2012թ. նախատեսվ
	Եկամուտներ ընդամենը	17369.8	19429.6	22835.9	23484.4	
Ա	հարկային եկամուտներ	3157.8	2616.9	2707.6	2894	
1	հողի հարկ	1703	1408	1510.6	1445	
2	գույքահարկ	1454.8	1208.9	1197	1449	
3	եկամտահարկ					
4	այլ հարկային եկամուտներ					
Բ	տուրքեր	585	627.2	1227.1	860	
1	պետական տուրքեր					
2	տեղական տուրքեր	585	627.2	1227.1	860	
Գ	ոչ հարկային եկամուտներ	1610	1573	1640	1950	
1	պետ. պահուստային հողերի վարձավճար	382	463.4	649.3	700	
2	գույքի վարձավճարներ					
3	տեղական վճարներ					
4	այլ ոչ հարկային եկամուտ					
Դ	պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	11635	14061.4	14357	14881.1	
Ե	եկամուտներ կապիտալի գործառնությունից	0	0	294.3	1710	
Զ	տարեսկզբի ազատ մնացորդ	0	87.7	1960.6	489.3	

Ծրագիր 5
Խմելու ջրի ներքին ցանցի մասնակի վերանորոգում

2007թ-ին հիմնանորոգման ենթարկվեց համայնքի խմելու ջրի ներքին ցանցի մոտ 80 % -ը:Ներքին ցանցի մոտ 1.5 կմ հատված մնաց նույն վատ վիճակում:Քայքայված,ֆիզիկապես մաշված խողովակաշարը պարբերաբար վթարվում է,զգալիորեն մեծանում է ջրի կորուստ, այդ հատվածում:
Թաղամասի բնակչության անխափան ջուր մատակարարելու համար անհրաժեշտություն է առաջացել վերանորոգել նաև ցանցի այդ հատվածը ևս:
Ծրագրի իրական նպատակներն են

1. Ապահովել թաղամասի բնակչությանը շուրջօրյա ջրով
2. Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
3. Կանխել կեխտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները

Նախնական մոտավոր հաշվարկներով 1.5 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի 7.6 մլն դրամ:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավ	2009թ. փաստ	2010թ. փաստ	2011թ. փաստ	2012թ. փաստ	2013թ. փաստ
	1	2	3	4	5	6	7
1	համայնքի տարածքը	հա	1056.5	1056.5	1056.5	1347.9	1347.9
2	բնակչության թիվը		1247	1250	1261	1275	
3	ծնունդը		17	11	16	18	
4	մահացությունը		10	4	9	5	
5	աշխ. ռեսուրսները այդ թվում		735	735	640	648	
6	գործազրկության մակարդակը						
7	առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը		14	14	13	12	13
8	պահուստային հողեր						
9	պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	40	40	52	52	52
10	խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	7.5	7.3	7.3	8.4	8.4
11	ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	20	20	20	20	20
12	ոռոգման համակարգում ընկած հողերը	կմ	340	340	340	340	340
13	ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկար-ը	կմ	6	6	6	7	7
14	չբարեկարգված փողոցների և ճան.-ի երկարությունը	կմ	4	4	5	5	5
15	մասնավոր բնակ ֆոնդ	հազար քմ	25870	2600	26900	27150	27150
16	բնակկարիքավոր ընտանիքների թիվը	հատ	28	28	30	32	32
17	մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	170	170	180	195	190
18	ջրի կորուստները ցանցում	%	18	20	20	22	22
19	սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	190	192	180	158	158
20	երեխաների թիվը մ-ում	մարդ	28	30	30	38	
21	գյուղապետարանի և ենթակա կառույցների աշխատողների թիվը	մարդ	17	17	17	18	18

Գյուղատնտեսական ցուցանիշներ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը
   - Անհատական տնտեսություն 328
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը ցենտներ
   - Ցորեն 110
   - Գարի 590
   - Կարտոֆիլ 560
   - Բանջարաբոստ. կուլտուրա 2200
   - Կաթ 1900
   - Միս 195
   - Բուրդ 45
   - Մեղր 65g.
   - Ձու 427000 հատ
3. Ցանքատարածություններ հա 66.83
   - Հացահատիկ 34.5
   - Կարտոֆիլ 3.4
   - Բանջարաբոստ. կուլտ 12.06
   - Կաղամբ 0.07
   - Առվույտ 16.35
4. Անասնաքանակը / գլուխ /
   - Խոշոր եղջերավոր անասուններ 725
     այդ թվում կովեր 312
   - Մանր եղջերավոր անասուններ 300
     այդ թվում մայրեր 271
   - Խոզեր 11
     այդ թվում մայրեր 1
   - Թռչուններ / թև / 2499
     այդ թվում հավեր 2138
   - մեղվաընտանիքներ / հատ / 568

Ծրագիր 6

Մարզադահլիճի կառուցում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքը հիմնադրման օրվանից կանգնած է մարզադահլիճ չունենալու փաստի առաջ: Սպորտային ավանդույթներ ունեցող / համայնքում լավ զարգացած է ֆուտբոլը, բասկետբոլը, շախմատը/ գյուղը որևէ սպորտային միջոցառում կազմակերպելու համար միշտ կանգնում է փակուղու առաջ: Բարվոք վիճակում է միայն ֆուտբոլի դաշտը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Զարգացնել երիտասարդության ֆիզիկական պատրաստվածությունը:
Կասեցնել նրանց արտահոսքը քաղաքներ և արտերկիր:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ինչպես ասվում է առողջ հոգի առողջ մարմնում:
Կապել երիտասարդությանը գյուղին:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով մարզադահլիճի կառուցման արժեքը կկազմի մոտ 200մլն. ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 2

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

1. Գյուղապետարանի շենք
2. Նախկին ճաշարանի շենք
3. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
4. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
5. Ներհամայնքային կամուրջներ
6. Հուշարձան
7. Գերեզմանատուն